



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագրի ծածկագիրը՝ 5100-201

ԵՐԵՎԱՆ - 2020

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ վիճակագրական կոմիտեն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում է նրանց ու հարկատուներին, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական տուն, 3

Հեռ. (+374 11) 52-33-56

Ֆաքս (+374 11) 52-19-21

Էլեկտրոնային փոստ՝ info@armstat.am

ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքեր՝ <http://www.armstat.am>,

<http://www.armstatbank.am>,

Ընթերցողի ուղեցույց

Վիճակագրական տեղեկագրում բերված վարչատարածքային բաժանման հիմք են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզերի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (Երևանի համայնքը 12 վարչական շրջաններով):

Վիճակագրական տեղեկագրում բերված բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են քաղաք, գյուղ կտրվածքով ըստ.

- մարզերի
- տարածաշրջանների (նախկին վարչական շրջաններ)
- մարզկենտրոնների
- տարածաշրջանային կենտրոնների

Վիճակագրական տեղեկագրի **հավելվածում** ներկայացված են մշտական բնակչության թվաքանակի ստացման սկզբնաղբյուրն ու դրանց արդիականացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումներ:

Պայմանական նշաններ.

- երևոյթը բացակայում է

0.0 ցուցանիշը փոքր է չափման միավորից

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
2020թ. ՀՈՒՆԻՍԻ 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

(2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ)

(հազար մարդ)

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Հայաստանի Հանրապետություն	2 963.0	1 895.8	1 067.2
ք. Երևան	1 087.9	1 087.9	-
Արագածոտնի մարզ	124.7	26.8	97.9
Աշտարակի տարածաշրջան	58.3	16.8	41.5
ք. Աշտարակ (մարզկենտրոն)	16.8	16.8	-
Ապարանի տարածաշրջան	21.1	5.9	15.2
ք. Ապարան	5.9	5.9	-
Արագածի տարածաշրջան	13.5	-	13.5
Թալինի տարածաշրջան	31.8	4.1	27.7
ք. Թալին	4.1	4.1	-
Արարատի մարզ	256.8	72.2	184.6
Արտաշատի տարածաշրջան	87.9	19.3	68.6
ք. Արտաշատ (մարզկենտրոն)	19.3	19.3	-
Արարատի տարածաշրջան	89.8	32.2	57.6
ք. Արարատ	20,4	20,4	-
ք. Վեդի	11.8	11.8	-
Մասիսի տարածաշրջան	79.1	20.7	58.4
ք. Մասիս	20.7	20.7	-
Արմավիրի մարզ	264.4	83.0	181.4
Արմավիրի տարածաշրջան	111.8	36.6	75.2
ք. Արմավիր (մարզկենտրոն)	28.0	28.0	-
ք. Մեծամոր	8.6	8.6	-
Բաղրամյանի տարածաշրջան	19.3	-	19.3
Էջմիածնի տարածաշրջան	133.3	46.4	86.9
ք. Վաղարշապատ	46.4	46.4	-

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Գեղարքունիքի մարզ	227.2	66.3	160.9
Գավառի տարածաշրջան	48.5	18.0	30.5
ք. Գավառ (մարզկենտրոն)	18.0	18.0	-
Կրասնոսելսկի տարածաշրջան	13.1	5.5	7.6
ք. Ճամբարակ	5.5	5.5	-
Մարտունու տարածաշրջան	88.4	11.4	77.0
ք. Մարտունի	11.4	11.4	-
Սևանի տարածաշրջան	39.9	19.0	20.9
ք. Սևան	19.0	19.0	-
Վարդենիսի տարածաշրջան	37.3	12.4	24.9
ք. Վարդենիս	12.4	12.4	-
Լոռու մարզ	213.0	125.9	87.1
ք. Վանաձոր (մարզկենտրոն)	77.1	77.1	-
Գուգարքի տարածաշրջան	19.0	-	19.0
Թումանյանի տարածաշրջան	37.9	16.6	21.3
ք. Ալավերդի	12.5	12.5	-
ք. Ախթալա	2.0	2.0	-
ք. Թումանյան	1.5	1.5	-
ք. Շամլուղ	0.6	0.6	-
Սպիտակի տարածաշրջան	35.5	12.7	22.8
ք. Սպիտակ	12.7	12.7	-
Ստեփանավանի տարածաշրջան	25.9	12.3	13.6
ք. Ստեփանավան	12.3	12.3	-
Տաշիրի տարածաշրջան	17.6	7.2	10.4
ք. Տաշիր	7.2	7.2	-
Կոտայքի մարզ	251.2	137.0	114.2
Հրազդանի տարածաշրջան	82.8	61.7	21.1

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
ք. Հրազդան (մարզկենտրոն)	40.0	40.0	-
ք. Չարենցավան	20.5	20.5	-
ք. Ծաղկաձոր	1.2	1.2	-
Կոտայքի տարածաշրջան	11.2	54.1	57.1
ք. Արուսյան	45.0	45.0	-
ք. Բյուրեղավան	9.1	9.1	-
Նախիրի տարածաշրջան	57.2	21.2	36.0
ք. Եղվարդ	12.0	12.0	-
ք. Նոր Հաճն	9.2	9.2	-
Շիրակի մարզ	231.3	135.7	95.6
ք. Գյումրի (մարզկենտրոն)	112.5	112.5	-
Ախուրյանի տարածաշրջան	37.1	-	37.1
Ամասիայի տարածաշրջան	6.1	-	6.1
Աշոցքի տարածաշրջան	9.3	-	9.3
Անիի տարածաշրջան	18.7	5.4	13.3
ք. Մարալիկ	5.4	5.4	-
Արթիկի տարածաշրջան	47.6	17.8	29.8
ք.Արթիկ	17.8	17.8	-
Սյունիքի մարզ	136.9	92.8	44.1
Կապանի տարածաշրջան	56.3	49.0	7.3
ք. Կապան (մարզկենտրոն)	42.1	42.1	-
ք. Քաջարան	6.9	6.9	-
Գորիսի տարածաշրջան	40.4	20.3	20.1
ք.Գորիս	20.3	20.3	-
Մեղրու տարածաշրջան	10.6	8.6	2.0
ք Մեղրի	4.5	4.5	-
ք. Ազարակ	4.1	4.1	-

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Սիսիանի տարածաշրջան	29.6	14.9	14.7
ք. Սիսիան	14.6	14.6	-
ք. Դաստակերտ	0.3	0.3	-
Վայոց ձորի մարզ	48.5	17.1	31.4
Եղեգնաձորի տարածաշրջան	31.5	7.4	24.1
ք. Եղեգնաձոր (մարզկենտրոն)	7.4	7.4	-
Վայքի տարածաշրջան	17.0	9.7	7.3
ք. Վայք	5.6	5.6	-
ք. Ջերմուկ	4.1	4.1	-
Տավուշի մարզ	121.1	51.1	70.0
Իջևանի տարածաշրջան	47.3	20.2	27.1
ք. Իջևան (մարզկենտրոն)	20.2	20.2	-
ք. Դիլիջան	17.2	17.2	-
Դիլիջան-գյուղեր (նախկինում՝ քաղխորհրդին ենթակա) *	5.5	-	5.5
Նոյեմբերյանի տարածաշրջան	27.2	6.3	20.9
ք. Նոյեմբերյան	4.5	4.5	-
ք. Այրում	1.8	1.8	-
Տաուշի տարածաշրջան	23.9	7.4	16.5
ք. Բերդ	7.4	7.4	-

* (Ներառում է՝ Հաղարծին, Թեղուտ և Գոշ գյուղերը)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ Ք.ԵՐԵՎԱՆԻ
2020թ. ՀՈՒԼԻՄԻ 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

(հազար մարդ)

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Հայաստանի Հանրապետություն	2 963.0	1 895.8	1067.2
ք. Երևան	1 087.9	1 087.9	-
Արագածոտնի մարզ	124.7	26.8	97.9
Արարատի մարզ	256.8	72.2	184.6
Արմավիրի մարզ	264.4	83.0	181.4
Գեղարքունիքի մարզ	227.2	66.3	160.9
Լոռու մարզ	213.0	125.9	87.1
Կոտայքի մարզ	251.2	137.0	114.2
Շիրակի մարզ	231.3	135.7	95.6
Սյունիքի մարզ	136.9	92.8	44.1
Վայոց ձորի մարզ	48.5	17.1	31.4
Տավուշի մարզ	121.1	51.1	70.0

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
2020թ. ՀՈՒԼԻՄԻ 1-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

(2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ)

(հազար մարդ)

<i>Վարչական շրջաններ</i>	Ընդամենը
Ք. ԵՐԵՎԱՆ	1 087.9
Աջափնյակ	110.2
Ավան	53.1
Արաբկիր	114.7
Դավիթաշեն	42.7
Էրեբունի	129.8
Կենտրոն	125.7
Մալաթիա-Սեբաստիա	140.0
Նոր-Նորք	133.7
Նորք-Մարաշ	11.7
Նուբարաշեն	10.0
Շենգավիթ	141.7
Քանաքեռ-Զեյթուն	74.6

ՀԱՎԵԼՎԱԾ

Բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության ստացման սկզբնաղբյուրը **բնակչության մարդահամարներն են:**

Բնակչության թվաքանակի ընթացիկ գնահատականը տրվում է բնակչության վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա (2011թ. հոկտեմբերի 12-21-ն անցկացված), որոնց ամեն տարի ավելացվում են տվյալ տարածքի ծնվածների և եկողների (հաշվառվածների) թվաքանակը, հանվում են մահացածների և տվյալ տարածքից մեկնածների (հաշվառումից հանվածների) թվաքանակը: Ծնվածների և մահացածների մասին տեղեկությունները ստացվում են քաղաքացիական կացության ծննդյան և մահվան վերաբերյալ ակտային գրանցումներով՝ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի ռեգիստրի հիման վրա ձևավորված տվյալների շտեմարանից, իսկ բնակչության միգրացիայի վերաբերյալ վարչական տվյալները ստացվում են Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից, ըստ բնակչության վայրի անձին հաշվառելու/հաշվառումից հանելու գործընթացում վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանից, եռամսյակային պարբերականությամբ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվառման և հաշվառումից հանելու գործառնություններն ուղղակիորեն կախված են քաղաքացիների կամքից, և որպես դրա հետևանք, այդ կարգի գրանցումները միգրացիոն տեղաշարժերի ամբողջական պատկերը չեն արտացոլում, այդ ցուցանիշներն ենթարկվում են վերագնահատման (ճշգրտման) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթի՝ «միգրացիա» բաժնում զետեղված տվյալներով հավաքագրված ամփոփ ցուցանիշների միտումների հիման վրա:

Բնակչության բաշխումը քաղաք և գյուղ կտրվածքով կատարվում է ըստ նրանց բնակչության (հաշվառման) վայրի: Քաղաքային են համարվում այն բնակավայրերը, որոնք «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են որպես քաղաքներ, մնացած բնակավայրերը համարվում են գյուղական:

Մարդահամարի արդյունքներով հաշվառվում է բնակչության երկու կատեգորիա՝ **մշտական բնակչություն և առկա բնակչություն:**

Մշտական բնակչության թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մշտապես բնակվում են տվյալ տարածքում, ներառյալ մարդահամարի պահին ժամանակավոր բացակայողները:

Ժամանակավոր բացակայողների թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին իրենց հիմնական (մշտական) բնակչության վայրից բացակայում են մինչև մեկ տարի ժամկետով:

Առկա բնակչության թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին գտնվել են տվյալ տարածքում, ներառյալ ժամանակավոր բնակվողները:

Ժամանակավոր բնակվողների թվաքանակում հաշվառվում են այն անձինք, ովքեր մարդահամարի պահին չբնակվելով մշտապես՝ գտնվում են տվյալ տարածքում մինչև մեկ տարի ժամկետով:

¹ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա բնակչություն», կետ 167 «Ժամանակավորապես բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագիրը պատրաստել է՝

Մարդահամարի և ժողովրդագրության բաժինը

Թողարկման պատասխանատու՝

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին

Տպագրված է՝

Տպագրակազմարարական և պատճենահանման
աշխատանքների բաժնում